№ 164 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3 — 1904 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3 № 164

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ՋՐԾԲՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արևելքի կաթոլիկների պաշտպանութեան իրաւասութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խօլերայի դէմ. Բագուի իրականութիւնից. Հայկական թատրոն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Տեղեկութիւններ Պարսկաստանից.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՐԵՒԵԼՔԻ ԿԱԹՈԼԻԿՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆԸ

—

Հռոմի պապի և Ֆրանսիական կառավարութեան մէջ ծագած անհամաձայնութիւնների պատճառով առաջ եկաւ և մի միջազգային հարց, որ վերաբերում է Արևելքի երկիրներում գտնվող կաթոլիկներին։

Աւանդաբար Ֆրանսիան էր համարվում կաթոլիկների պաշտպանը Արևելքի երկիրներում։ Շնորհիւ այն հանգամանքի, որ անցեալում Ֆրանսիան թէ մեծ հեղինակութիւն ունէր Արևելքում և թէ ամենախոշոր և ամենաուժեղ կաթոլիկ պետութիւնն էր Եւրոպայում, նրա ձեռքն էր անցել կաթոլիկների պաշտպանութեան բարձը կոչումը, որը սակայն մի և նոյն ժամանակ դնում էր նրա վրա և մի ծանր պարտաւորութիւն։

Ֆրանսիայի միջազգային հեղինակութեան համար նրա կատարած դերը ունէր որոշ նշանակութիւն և գրաւիչ էր, որովհետև Ֆրանսիան հանդիսանում էր իբրև մի պետութիւն, որը ոչ միայն իր սեփական շահերով էր ապարէզ գալիս միջազգային քաղաքականութեան, մէջ այլ և աւելի փայլուն դրօշակով՝ հանրային շահերի պաշտպանութեան դաղափարով։

Եւ արդարև, շնորհիւ Ֆրանսիայի ներգործական ազդեցութեան և հեղինակաւոր միջամտութեան, Արևելքի շատ տեղերում կաթոլիկ քրիստոնեաները վայելել են արտօնութիւններ և ազատ են մնացել զրկանքներից։ Ֆրանսիայի նախաձեռնութեամբ վաթսունական թուականներին աջողվեց, օրինակ, Լիբանանի քրիստոնեաներին տալ կիսաինքնավարական մի կազմակերպութիւն, որը գործում է մինչև մեր օրերը։

Սակայն վերջին երկու տասնամեակում եւրոպական մի-ս պետութիւնները ջանքեր գործ դրին, որ իրանք վերահսկող հանդիսանան այն կաթոլիկների գործերին, որոնք նրանց հպատակներն են եղել կամ գործում են նրանց քաղաքական ազդեցութեան շրջաններում։ Եւ այդպիսով իրապէս սահմանափակվում էր Ֆրանսիական միջամտութեան շրջանակը։ Մի քանի տարի առաջ, ինչպէս երևի յիշում են մեր ընթերցողները, Գերմանիան պաշտօնապէս յայտարարեց, որ Պալեստինում ինքը իրան է վերապահում գերմանահպատակ կաթոլիկների պաշտպանութեան իրաւունքը։

Չը նայելով առաջ եկած փոփոխութիւններին, այնուամենայնիւ Հռոմը առանձին նշանակութիւն էր տալիս Ֆրանսիական հեղինակութեան և ցանկանում էր, որ կաթոլիկների աւանդական պաշտպանը Արևելքում ճանաչվի և առաջիկայում, իբրև այդպիսին։ Եւ միայն նորերս, երբ Հռոմի և Ֆրանսիայի միջև տեղի ունեցաւ սառնութիւն, լուրջ լուրեր տարածվեցին, որ Հռոմը վճռել է իր կողմից այլ ևս չը սրբագործել Ֆրանսիայի միջազգային պաշտպանի դերը Արևելքում կաթոլիկների վերաբերութեամբ։ Սակայն, ըստ երևոյթին, Վատիկանում նպատակայարմար չեն համարում այդքան հեռու գնալ և Ֆրանսիայի հետ ունեցած վէճը ուրիշ հողի վրա տեղափոխել։ Ֆրանսիացիները, թէև ասում են, որ չեն վախենում Հռոմի սպառնալիքից, համարելով Ֆրանսիայի համար նոյն իսկ մի թեթևութիւն ազատ լինել մի մշտական միջազգային պաշտպանի դերից, բայց, անկասկած, հաճոյք չեն զգայ իրանց ազդեցութեան նուազումից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕԼԵՐԱՅԻ ԴԷՄ

—

Թիֆլիսի քաղաքային գործադիր-սանիտարական յանձնաժողովը առաջարկել է սանիտարական թաղական հոգաբարձուներին, որոնց թաղերի շրջանում տեղի է ունենում մրգերի մեծաքանակ առևտուրը, զօրացնել բժշկական-սանիտար հսկողութիւնը բերված մրգերի վրա։ Եթէ հոգաբարձուն կամ բժիշկը նկատեն ծախվելու հանված խակ մրգեր, պէտք է ոչնչացնեն, ուշք չը դարձնելով ապրանքի քանակութեանը։ Բացի դրանից, նրանք իսկոյն կազմելու են ակտ կամ արձանագրութիւն, որպէս զի յանցաւորներին ենթարկեն դատի ու պատասխանատուութեան։ Հաճոյքով արձանագրելով այս փաստը, մենք խորհուրդ ենք տալիս Կովկասի բոլոր գիւղ ու քաղաքների վերահսկող մարմիններին նոյն տեսակ խելացի կարգադրութիւն անել իրանց քաղաքների ու գիւղերի համար։

Բագուի վրայով, ինչպէս հաղորդում են այստեղի լրագիրները, անց են կացել վերջին օրերս երեք բժշկական խմբակներ։ Դրանք գնացել են Պարսկաստան—մէկը Թէհրան, միւսը Թաւրիզ, իսկ երրորդը Մէշհեդ,—խօլերայի դէմ կուելու համար։ Դրանք ուղարկվում են Ֆինանսների մինիստրութեան կողմից ռուս-պարսկական բանկի բաժիններ եղած այդ 3 կէտերում։

ԲԱԳՈՒԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

Դարձեալ խօլերայի մասին։ Զորեքշաբթի, ամսի 28-ին, նշանակված էր թաղական սանիտարական հոգաբարձուների առաջին ժողովը՝ քաղաքագլխի փոխանորդի նախագահութեամբ։ Քննվելու էին հոգաբարձուների վերաբերեալ ինստրուկցիան և այլ ընթացիկ խնդիրները։ Մինչև այդ օրը թաղական հոգաբարձու լինելու ցանկութիւն յայտնել էին 14 հոգի, որոնցից ներկայ էին 11 հոգի, երկուսն էլ նոր գրվեցին։ Նիստը բացվելուն պէս ժողովականները նախագահի ուշադրութիւնը հրաւիրեցին մարդկանց քչութեան վրա. ինչ կարելի է անել 13 հոգով այնտեղ, որտեղ մօտ 200 հոգի է պահանջվում առնուազը։

Նախագահը նեղն ընկած պատասխանում է, թէ ինչ անեմ, բացի լրագիրների կոչից նամակներ եմ գրել 150 պատուաւոր և ազդեցիկ քաղաքացիների, բայց ոչ մէկից ոչ պատասխան եմ ստացել և ոչ էլ գոնէ մէկը ներկայ է։

Հոգաբարձուներից մէկը քաղաքագլխի ուշադրութիւնն է հրաւիրում հէնց այդ հանգամանքի վրա. ինչո՞ւ դիմել և մեր յոյսերը դնել այդ, այսպէս կոչված, «ազդեցիկների» և «պատուաւորների» վրա, քանի որ դառը փորձերով մեզ յայտնի է, որ այդպիսիները երբէք ժողովրդի, մասսայի բարօրութեան վրա չեն մտածել և չեն էլ մտածի։ Ինչո՞ւ զանց առնել Բագուի խոշոր ինտելիգենցիան, երիտասարդութիւնը, ուսուցիչներին, ուսանողներին։ Դրանք են, որ միշտ ամենայն պատրաստակամութեամբ իրանց կեանքը անգամ չեն խնայի այդ ժողովրդի համար. եղել է սով, հեղեղներ, համաճարակներ—ովքեր են օգնութեան եկել. հասարակ մահկանացուները, երիտասարդութիւնը, թէ՞ «ազդեցիկները», «պատուաւորները»։ Եւ եթէ մենք կամենում ենք, յիրաւի, էական գործ կատարել, հանգիստ թողնենք այդ «պատուաւորներին» և մեր ժողովրդական ոյժերով գործ տեսնենք։

Ժողովը մեծամասնութեամբ ցանկութիւն յայտնեց տեսնել գործի մէջ տեղական ինտելիգենցիային, որից յետոյ քննվեց 1892 թ. եղած ինստրուկցիան, որը ընդունվեց անշան փոփոխութեամբ. միայն դուրս գցվեց հոգաբարձուների նշանները ունենալը՝ բաւականանալով միմիայն բաց կարտերով, որը ապացուցէ ներկայ անձնաւորութեան հոգաբարձու լինելը։

Վիճաբանութեան առարկայ դարձաւ թաղական հոգաբարձուների և սանիտարական մասնախմբերի խոնարհարձ յարաբերութեան խնդիրը՝ առաջինների անկախութիւնը ընդունելով և ապա թաղական հոգաբարձուների իրաւունքների մասին երկար խօսվեց. իրաւունք ունի նա արդեօք, առանց սանիտարական բաժնի, ոչնչացնել տալ այս կամ այն փչացած, իր կարծիքով, դիցուք մթերքը։ Երկար վիճաբանութիւնները պարզեցին, որ փչացնելու իրաւունք չունի, բայց հնարաւորութիւն ունի արգելք հանդիսանալու և ապա յայտնելու սանիտարական բաժնին։

Մանրամասն խմբագրութիւնը յանձնվեց պ.պ. Թօփչիբաշեվին և Անդրօնիկովին, իսկ քաղաքը թաղերի բաժանելը՝ պ.պ. Խմէլևսկուն և Յովհաննէսեանին։

Ռ. Յովհաննէսեանց

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

—

Երէկ, օգոստոսի 1-ին, կիրակի, դերասան Գ. Պարոն-Սարգսեանը հայ թատերասէրների մասնակութեամբ տուեց մի ներկայացում կօնցերտական բաժնով Թիֆլիսի գերմանական ժողովարանի դահլիճում։ Ներկայացրին «Տիկինը ննջում է» մէկ գործ. վոդեվիլը, թարգմ. Թուրեանի և Տէր-Գրիգորեանի «Էս էլ քի սօցիալութին» մէկ գործ. վոդեվիլը։ Երկու ներկայացումներն էր էլ, իբրև սիրողների ձեռնարկութիւն, խաղի տեսակէտից բաւարար էին։ Պ. Գ. Պարոն-Սարգսեան ոչնչով չէր տարբերվում սիրողներից և շարունակ յուշարարին էր նայում, մի բան, որ գոնէ դերասանը իրան թոյլ չը պէտք է տայ։

Ներկայացումը բաղկացած էր և զաւեշտից, որի ընթացքում սիրողների երգեցիկ երկսեռ խումբը երգեց մի քանի ժողովրդական և ազգային երգեր, որոնք վատահ կերպով չէին երգվում և ընդհանրապէս թոյլ ազդեցութիւն էին թողնում։ Տեղի ունեցան և եւրոպական ու ասիական պարեր։ Մի խորհուրդ կը տայինք ներկայացում կազմակերպողներին, այն է՝ ներկայացումը ճիշդ ժամանակին սկսել և ոչ թէ ժամ ու կէս ուշ։ Ներկայացումը յաճախ խանգարվում էր մի քանի պարոնների անտեղի ծափահարութիւններով և գոռում գոչիւններով, որ աւելի քան վատ տպաւորութիւն էր թողնում հանդիսականների վրա։ Դահլիճը կիսով չափ դատարկ էր։

Լ. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Օգոստոսի 1-ին Թիֆլիսի ուղղափառ ռուսական Ալէքսանդրօ-Նեվսկի եկեղեցում պատարագից յետոյ մաղթանք կատարվեց Նորաձին Թագաժառանգ Ցեսարեվիչ Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլայեվիչի համար։ Շաբաթ, կիրակի և երկուշաբթի՝—3 օր շարունակ քաղաքը զարդարված էր դրօշակներով։ Կիրակի օրվան մաղթանքին ներկայ էին թէ հոգևոր և թէ աշխարհական բոլոր մեծամեծ պաշտօնեաները, զանազան դասակարգերի ներկայացուցիչները և ժողովրդի մեծ բազմութիւն։ Մաղթանքից յետոյ արքէնալից արձակվեց թնդանօթի 21 հարուածը։ Նոյն օրը մաղթանքներ կատարվեցին հայոց Վանքի մայր եկեղեցում և այլ աղօթատներում։

—

„Торг. Пром. Газ."-ն ասում է, որ Լօձի գործարանատէրերը դիմել են երկաթուղիների դեպարտամենտին և խնդրել, որ նա միջոցներ ձեռք առնէ Ռուսաստանի առևտուրը հարաւային Պարսկաստանի հետ աւելի լայն կերպով զարգացնելու և արդէն Պարսկաստանի միւս մասերում ռուսների ունեցած առևտրական հրապարակներն իրանց ձեռքին պահելու համար։ Յայտնի է, որ Պարսկաստան ուղարկվող ապրանքները օգտվում են երկաթուղային էժան սակագնով։ Գործարանատէրերն իրանց խնդիրքում յիշատակել են և հետևեալը։ Թոյլատրել գործարանատէրերին Օդեսայի, Թիֆլիսի և Բագուի կայարանները դարձնել արտահանութեան կայարան, այսինքն՝ գործարանատէրերի այդ կայարանները բերած բոլոր ապրանքներից առնել սովորական ճանապարհածախքը ներքին շրջանառութեան համար. բայց երբ այդ կայարաններից ապրանքներն արտահանելու լինեն Պարսկաստան, այն ժամանակ արտահանված բոլոր ապրանքը հաշուել էժանացրած սակագներով—այնպէս՝ իբր թէ գործարանից մինչև Պարսկաստան միանգամից է տարվել էժանացրած ճանապարհածախքով, միայն այդ 3 կայարաններից մէկում ապրանքը մի քիչ ժամանակ կանգ է առել. և դրա համեմատ էլ վերադարձնել ապրանքատիրոջը արդիւնագործութեան տեղից մինչև այդ արտահանութեան կայարանը եղած ճանապարհածախքի աւելորդ գումարը։ Այդպիսով յիշված 3 կայարաններում ռուս արդիւնագործութիւնը կունենայ միշտ պատրաստի ապրանք Պարսկաստան հասցնելու և այնտեղ աջող մրցութիւն անելու համար օտար ապրանքների հետ։ Գործարանատէրերի այդ միջնորդութիւնը շուտով կը քննվի Կովկասեան և անդրկասպեան ուղղակի յարաբերութիւնների յանձնաժողովի ժամակայ նիստերում։

—

Ա. Յ. Մանթաշեանը և Պ. Յով. Ղուկասեանը հիմնում են մի նոր ընկերութիւն, որի անունն է «Նաւթ և նաւթային արդիւքներ Ռուսաստանում վաճառելու ընկերութիւն»։ Հիմնական դրամագլուխն է 3 միլիոն ռուբլի, որ բաժանվում է 3000 ակցիաների՝ ամեն մէկը 1000 ռուբլի արժէքով։ Ակցիաները լինելու են անուանական, այսինքն՝ ամեն մէկի վրա նշանակվելու է տիրոջ անուն-ազգանունը և կոչումը։ Ընկերութեան գործերը կառավարելու է 3 դիրեկտորներից բաղկացած մի վարչութիւն։ Դիրեկտորներին ընտրելու է ակցիոնէրների ընդհանուր ժողովը 3 տարով։ Վարչութեան կենտրոնը լինելու է Բագուում։ Նախագծված ընկերութեան կանոնադրութիւնն արդէն ներկայացված է Ֆինանսների մինիստրութեանը հաստատութեան համար։

—

Վլադիկաւկազեան երկաթուղու վարչութիւնը, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան առաջարկի համաձայն, վճռել է սկսել իր երկաթուղիների շոգեշարժ ուժը էլեքտրականութեան վերածելու ծրագրի մշակութիւնը։

—

Մօսկվայում թոյլատրութիւն է ստացվել հրատարակվելու „Семья и Школа" անունով մի նոր մանկավարժական ամսագիր՝ մեծ երեխաների ընթերցանութեան համար։ Խմբագիրն է Ն. Վ. Լվովը։ Հրատարակութիւնը լինելու է նախնական ցենզուրայով։ Եթէ այդ նոր ամսագիրը կարողացաւ գոնէ հաւասարվել նոյն անունը կրող նախկին լուրջ մանկավարժական ամսագրին, կարելի է ասել, որ պ. Լվովը մեծ ծառայութիւն կարող է անել ռուսական դպրոցական գործին։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 28-ի երեկոյեան, ժամը 9-ին «Կավկազ-Մերկուրի» Կրասնօվոդսկ գնացող շոգենաւը բարձելիս՝ Թուրք մշակներից մէկի ոտը սայթաքելով՝ ընկաւ ծովը. մինչև օգնութիւն հասնելը, դժբաղդը խորասուզվեց ծովի անդունդը. մօտաւորապէս ամբողջ մի ժամ որոնելուց յետոյ, հազիւ աջողվեց գտնել նրա խեղդված ու անշնչացած դիակը։ Բագուում շատ յաճախ են պատահում նոյնանման դէպքեր, թէ լողա-

բաններում, թէ շոգենաւերում և թէ ծովի ափերի զանազան մասերում»։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են։ «Մեզանում երեխաների մէջ տարածված են մի քանի տարափոխիկ հիւանդութիւններ՝ ինչպէս կապոյտ հազը, փորհարիները, որոնք յաճախ երեխաներից զոհեր են տանում։ Անցեալ կիրակի, կրկին նշանակված էր քաղաքիս ս. Փրկիչ եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովը նոյն եկեղեցու համար նոր երէցփոխ ընտրելու, սակայն այս անգամ էլ ժողովուրդ չը հաւաքվելով, չը կայացաւ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Գենեռալ Կուրոպատկինը «Frank. Zeitung» գերմանական լրագրի թղթակիցը, որ գենեռալ Կուրոպատկինի կարգադրութեամբ հեռացրվեց պատերազմական գործողութիւնների բեմից առանց վերադառնալու իրաւունքի, հետևեալ կերպով է բնորոշում Մանջուրիայի զօրքի ընդհանուր հրամանատարին. «Մեր ժամանակակից Մօլտկէներից ոչ մէկը չէ կարող պարզ գաղափար կազմել այն գործի դժուարութիւնների մասին, որ բաժին է ընկել գենեռալ Կուրոպատկինին։ Նրա տրամադրութեան տակ չը կար լաւ կազմակերպված զօրք, որ պատրաստված լինէր և յարմարեցրված խաղաղ ժամանակի վարժութիւններով մանջուրական պատերազմական բեմի առանձնայատկութիւններին։ Նա ստիպվեց ինքն կազմել մի նոր զօրք խելօք և ձեռներէց թշնամու աչքի առաջ։ Իբրև պատերազմական մինիստր նա լաւ գիտէր Հեռաւոր Արևելք ուղարկվող ռազմական մասերի կազմակերպութեան թերութիւնները. նա պարզ տեսնում էր իրան յանձնված գործի ամբողջ դժուարութիւնը և այնու ամենայնիւ նա չը տատանվեց ստանձնել գլխաւոր հրամանատարութիւնը։ Այդպիսի վճռականութեան համար չէ կարելի մեղադրել այդ քաջ զինուորականին, որը իր ամբողջ եռանդը նուիրեց զրօյից ստեղծելու մի նոր ռազմիկ զօրք, թափթփված ռազմական մասերի կոտրանքներից։ Նա պէտք է զէնքի կանչէր և կազմէր բանակը թշնամու անընդհատ հարուածների ներքոյ։ Եւ նա կարողացաւ ոչ միայն անել այդ, այլ և նշանաւոր կերպով թուլացնել թշնամու զօրքը։

«Միշտ հանդարտ և պազարիւն, միշտ անխոնջ աշխատող, Կուրոպատկինը թողնում է ամենքի վրա, ով նրա հետ գործ է ունենում, բարեհոգի համեստ մարդու տպաւորութիւն, համակված ամբողջովին պարտականութեան գիտակցութեամբ։ Գալով Մանջուրիա, նա գտաւ այդտեղ զօրքի շատ սահմանափակ թիւ և միայն վերջին ժամանակներս զօրքերը սկսեցին գալ բաւական թւով։ Օֆիցէրները և զինուորները նայում են նրա վրա կատարեալ վստահութեամբ։ Նա չունի սալոնական ձևեր։ Նրա ռազմական կեանքը յայտնի է ամենքին։ Ծերունիները պատմում են երիտասարդութեան նրա քաջագործութիւնների մասին Թիւրքիայում, Միջին Ասիայում, Թիւրքմէնական դաշտերում և նրա անուան շուրջը լեգենդներ են ստեղծվել։ Նա մօտ է կանգնած զինուորական շրջանին, ուստի և թանգ է նրանց համար։ Նրանք համարում են նրան իրանցը, ինչպէս արիւն արիւնից և ոսկր ոսկրից։ Եւ ինչպէս այդ մարդը կարողանում է տիրել և հրամայել նրանց։»

«Ամենքը համոզված են, որ այդ նոր Ֆաբիուս Կունկտատորը իսկական հրամանատար է։ Նոյն իսկ եապոնացիները, չը նայելով, իրանց աջողութիւններին, խոր կերպով մտածում են այն հարցի մասին, թէ ուր և երբ այդ սակաւախօս և հանդարտ մարդը կանգ կառնէ։ Նրանց թվում է, որ նա ոչ մի շանս չունի աջողութեան, բայց նրա վստահ հանգստութիւնը խռովում է նրանց հոգին և ստիպում է երեքպատիկ զգուշութիւն բանեցնել։ Նրանք լսել են, որ հէնց պատերազմի սկզբում նա անհրաժեշտ էր համարում մաքրել հարաւային Մանջուրիան և նահանջել դէպի Խարբին։ Բայց արդէն կէս տարի անցաւ և նրանք չը կարողացան նոյն իսկ Լեաօեանից այն կողմը քշել նրան։ Մինչ այդ նա օրէցօր աւելի զօրեղ է դառնում և մօտ է այն ժամանակը, երբ նա կարող կը լինի արշաւումն սկսել։

«Եթէ եապոնացիներին չաջողվեց Կուրոպատկինի համար երկրորդ Սէդան ստեղծել, պատերազմը երկար կը շարունակվի։ Այնպիսի բնաւորութիւններ, ինչպէս Կուրոպատկինը, զէնքը վար չեն դնում անաջողութեան առաջ։ Նոյն իսկ նրանք, որոնք նրան հանճարեղ ռազմագէտ չեն համարում, գիտեն, որ նրա լրջութիւնը, աշխատութեան ընդունակութիւնը և ուղիղ հայեացքը իրերի վրա բարձր են դասում նրան զինուորական մարդկանց ընդհանուր մակերևոյթից։ (Нов. Вр.)

Եապոնական հսկայական կորուստներ հերքվում են եապոնական աղբիւրներից։ «Times» լրագրին հեռագրում են Տոկիօից, թէ եապոնական օֆիցէրները հերքում են այն լուրը, որ իբր եապոնացիները հսկայական կորուստներ են կրել Պորտ-Արթուրի կռիւների ժամանակ։ Զիֆուից յուլիսի 27-ին ստացված տեղեկութիւնների համաձայն, Պորտ-Արթուրի մօտ նորոգվեց սաստիկ կռիւ, ամբողջ օրը լսվում էր թնդանօթաձգութիւն։ Լրագիրները հաղորդում են իբրև լուր, որ Գինզանի մօտ երևաց ռուսական մի պատերազմական նաւ և իբր կռիւ սկսվեց եապոնական կրէյսէրների հետ, որի մանրամասնութիւնները չը կան։ Յարաբերութիւնները Գինզանի և Սէուլի միջև ընդհատված են։ Սէուլից եկած մի հեռագիր խօսում է այն մասին, թէ գենեռալ Կուրոկիի զօրքերը գրաւել են այնպիսի դիրքեր, որոնք իբր թէ սպառնում են Մուկդէնին։ (Бирж. В.)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Պարսից կառավարութիւնը իր արտաքին գործերի մինիստրութեան և դեսպանների ու հիւպատոսների միջոցով հերքումներ է տպել տալիս լրագիրների մէջ խօլերայի մասին։ Եթէ հաւատանք այդ պարսկական պաշտօնական լուրերին, որոնք ոչնչով չեն տարբերվում թիւրքական յայտնի սուտ լուրերից, խօլերան թէհրանում բոլորովին դադարել է, իսկ Պարսկաստանի միւս մասերում ևս շատ թոյլ կերպով տարածված է և անհետանալու վրա է։

Սակայն թէ ռուսաց պաշտօնական հաղորդագրութիւնները, թէ «С. П. Вѣдомости» հաղորդած տեղեկութիւնները և թէ պարսկական զանազան կենտրոններից մեր ստացած նամակները այլ կերպ են ներկայացնում եղելութիւնը։ Թէհրանում խօլերան, արդարև, նուազել է, բայց վերոյիշեալ լրագրի թղթակցի ասելով, նուազել է պարզապէս այն պատճառով, որ շատ բիչ ժողովուրդ է մնացել և մեծամասնութիւնը փախել է։

Իսկ Բարֆրուշից մեր ստացած մասնաւոր նամակը հետևեալն է ասում. «Խօլերան այժմ սարսափելի կոտորած է անում Թէհրանից Մեշէդ տանող գծի ամբողջ երկարութեան վրա, որի տարածութիւնը 1000 վերստից աւելի է։ Թէհրանում այժմ շատ քչացել է զոհերի թիւը, իսկ Թէհրանից դուրս Սէմնան, Դամղան, Շահրուդ, Սաբզվար, Նշաբուր և Մեշէդ քաղաքներում այժմ էլ խօլերա կոտորած է անում։ Երկու օր առաջ (յուլիսի 25-ին) Մեշէդից ստացված մի հեռագրի համաձայն, այդտեղ զոհերի թիւը օրեկան 1000-ի է հասնում»։

Ինչպէս յայտնի է, ռուսաց կառավարութիւնը ամբողջ Պարսկաստանը խօլերայից վարակված և անբարեյաջող հրատարակեց և շատ տեղերում հաղորդակցութեան կէտերը ու մուտքերը փակված են։

Թէհրանում պարսից կառավարութիւնը ոչ մի նախազգուշացուցիչ, կամ սանիտարական և կամ ախտահանական միջոցի չէ ձեռնարկել։ Միայն ամերիկացի քարոզիչները մի քանի բարակներ են հիմնել և ընդունում են այնտեղ հիւանդացողներին, իսկ Պետերբուրգի ռուսաց Արևելագիտական Ընկերութեան Թէհրանի ճիւղը բացել է մի հիւանդանոց Զերգենդէ ամարանոցում։ Այդ առիթով Թէհրանից հաղորդում են «Новое Время» լրագրին, որ համաճարակի երևալուց մինչև այսօր 14,000 մարդ է մեռել Թէհրանում։ Ամենաստիկ ժամանակ օրեկան մեռնում էր 1000, իսկ սովորական՝ 300—400—500 մարդ։ Շրջակայ գիւղերը վարակվեցին Թէհրանից փախածներից. մի գիւղի մէջ, որ բաղկացած էր 5000 բնակիչներից, 1500-ը մեռան։

Պարսից կառավարութիւնը և նրա հիւպատոսները աւելի լաւ կանեն այն դրամներով, որ գործ են դնում եւրոպական լրագիրների մէջ հերքումներ տպել տալու, դեղօրայք գնէին և բաժանէին աղքատ ժողովրդին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

31 յուլիսի

ՊԱՐԻԶ։ Լրագիրները ողջունում են Թագաժառանգի ծնունդը իբրև բարերախտ նշան և ջերմագին ողջունում են Կայսերական ընտանիքը և Ռուսաստանը, արտայայտելով Ֆրանսիայի համակրութիւնը։

ՏՈԿԻՕ։ (Ռէյտէր)։ Եապոնական կորուստները յուլիսի 28-ի ծովային ճակատամարտի մէջ 170 հոգի են։ Սպասվում է, որ կառավարութիւնը առաջադրութիւններ կանի Գերմանիային Ցղինդաօ եկած պատերազմական նաւերի վերաբերմամբ։

ԶԻՖՈՒ։ (Ռէյտէր)։ Զինական կրէյսէրի մակոյկները վերցրին կապիտան Բօշչակովսկուն, որ վիրաւորված էր ոտից և 20 վինուորներ։ Ծովապետ Սան և «Խայկնի» հրամանատար Զէն կապիտանը ցոյց են տալիս, որ չինացիները մեծ գործունէութիւն ցոյց տուեցին, քան առաջ ենթադրվում էր։ Երբ առաջին հակականանաւը անցնում էր չինական «Սասի» և «Խաչի» պատերազմական նաւերի առջևից, իսկ երկրորդը հեռանում էր, ետևից քաշ տալով «Ռէշիտելնի» նաւը, «Խաչիի» վրա իրանցումն տեղի ունեցաւ։ Հակականանաւը հնազանդեց հրամանին՝ կանգ առնել։ Ծովապետը յայտնեց եապոնական հրամանատարին, թէ դա չէզոքութեան ակնյայտ խախտումն է և պահանջեց վերադարձնել «Ռէշիտելնի» նաւը Զիֆու։ Եապոնացին պատասխանեց, որ մի ուրիշ հակականանաւ կը հրաժէշտ և կը վերադառնայ Զիֆու։ Սան ծովապետը հաւատաց եապոնական ազնիւ խօսքին և թոյլ տուեց եապոնական հակականանաւին հեռանալ։ Ծովապետը սաստիկ վրդովված է. նա հիւանդացաւ և յանձնեց հրամանատարութիւնը Զէն կապիտանին։ Վերջինի պատմելով, երբ եապոնացիները մտան, ծովապետը ուղարկեց մի օֆիցէր հաւաստիացնել «Ֆուջիմօտօի» հրամանատարին, որ «Ռէշիտելնին» զինաթափ է եղած։ Օֆիցէրները և էկիպաժը խօսք տուին և ստորագրեցին մի դոկումենտ այդ առիթով։ Ծովապետը կրկնեց այդ տեղեկութիւնները «Ֆուջիմօտօին», որը պատասխանեց, թէ ամենևին մտադիր չէ յարձակվել «Ռէշիտելնիի» վրա։ Ապա չինական ծովապետը ուղարկեց մի օֆիցէր նաւակով դէպի լողուն փարոսը «Ռէշիտելնի» նաւի կայանի մօտ, հսկելու համար դէպքերի վրա։ Բօշչակովսկին, տեսնելով սպառնացող վտանգը, խնդրում է չինացուն տալ նրան մի քանի ռումբեր, պայթեցնել ականը կամ ուղարկել չինական կրէյսեր նրա պաշտպանութեան համար։ Զինական օֆիցէրը պատասխանեց, որ իրան հրամայված է միայն հսկել դէպքերի վրա։ Այն ժամանակ Բօշչակովսկին, ժողովելով էկիպաժը, ասաց. «Հնարաւոր է, որ յարձակման ենթարկվենք. քնեցէք տախտակամածի վրա կատեռները գլխատակին դրած»։ Երբ եապոնական լէյտենանտը մօտեցաւ «Ռեշիտելնիին», նրա հետ բարձրացաւ նաւի վրա եապոնական էկիպաժը, զինաւորված հրացաններով և սուիններով։ Բօշչակովսկին բողոքեց, ասելով, որ նա դիմադրելու կարողութիւն չունի և որ եապոնացիները խախտում են չէզոքութիւնը և կամաց հրամայեց իր օգնականին պատրաստել վառօդ «Ռէշիտելնին» պայթեցնելու համար։ Որպէս զի ժամանակ տայ կատարել հրամանը, Բօշչակովսկին սկսեց վիճել եապոնական օֆիցէրի հետ միջազգային իրաւունքի տնօրէնութիւնների մասին, բայց նա անփոփոխ պատասխանում էր, թէ ռուսները կամ պէտք է դուրս գան և կուեն, կամ պատրաստվեն իրանց նաւի ետևից քաշ գալու Զիֆու։ Այդ ժամանակ արդէն ռուսների մէջ կամաց տարածվեց հրամանը՝ դիմադրել բռունցքներով։ Բօշչակովսկին ասում է, որ եապոնացիները խոստացան խնայել նրա կեանքը, եթէ նա համաձայնվի գերի ընկնել։ Այդ վիրաւորանքը այնպէս վրդովեց ինձ, որ ես խփեցի եապոնացուն։ Չիմանալով, արդեօք վերջացած են պատրաստութիւնները պայթեցման համար, ես հարուածով նաւից ջուրը հրեցի եապոնական օֆիցէրին, որը ինձ իր հետ քաշ տուեց։ Նա ընկաւ իր մակոյկը, իսկ ես ծովը, բռնած նրա կոկորդից և հարուածներ հասցնելով նրան, մինչև ազատվեց ձեռքիցս»։ Մինչ այդ ռուսները կուում էին եապոնացիների հետ, որոնք հրացան և սուին էին գործ դնում։ Ռուսները և եապոնացիները զոյգ զոյգ ընկնում էին ջուրը։ Բօշչակովսկին փորձեց վերադառնալ և նորից ընդունել նաւի հրամանատարութիւնը, բայց նրա վրա 4 անգամ գնդակ արձակեցին ջրի մէջ, որ նրա աջ ոտքը վիրաւորեց։ «Ռէշիտելնիի» վրա կային 51 օֆիցէր և զինուոր։ Յայտնի է միայն 35-ի վիճակը։ Ենթադրում են, որ մի քանի հոգի եապոնացիներ նոյնպէս ոչնչացել են։ Զը կարողանալով հանել «Ռէշիտելնիի» տախտակամածը, Բօշչակովսկին լող տուեց դէպի մօտակայ ջօնկան, բայց չինացի թիավարները թիերով դէն հրեցին նրան։ Զը նայելով իր վէրքին, Բօշչակովսկին 50 րոպէ մնաց ջրի երեսին, մինչև որ չինական «Խաչուն» պատերազմական նաւի մակոյկները վերցրին նրան։ Զէն կապիտանը հրամայեց փոխադրել Բօշչակովսկուն և երկու օֆիցէրներին իր սեփական խուցը։ Ռուս նաւաստիները հագել էին չինական նաւատորմի համազգեստ և այդ շորերով այսօր եկան ռուսաց հիւպատոսարանը։ Մեկնելուց առաջ, «Ֆուջիմօտօն» զեկուցագիր ուղարկեց եապոնական հիւպատոսարանը, չը յիշելով ջրի մէջ եղած ռուս ծովագնացների վրա արձակած գնդակների մասին, այլ յայտնելով, թէ գործել է համաձայն ծովապետի հրամանին՝ կռուել կամ բռնել «Ռէշիտելնին»։ Բօշչակովսկին չէ հասկանում, թէ ինչու պայթուցը չառաջացաւ։ Ռուսաց նաւաստիները յայտնում են, որ լսում էին, ինչպէս հրամանատարը ասում էր եապոնացիներին. «Սպանեցէք ինձ, որովհետև ես երբէք անձնատուր չեմ լինի»։ Բօշչակովսկու վրա կարևոր յանձնարարութիւն էր դրված և «Ռէշիտելնիի» բռնելը, երևի, խափանեց ռուսաց ծրագիրները։ Եապոնացիների նաւը գալուց առաջ, Բօշչակովսկին այրեց կարևոր թղթերը։ Օտարազգի հիւպատոսները զեկուցումն կազմեցին պատահածի մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գենեռալ Սախարովի հեռագիրը յուլիսի 30-ից գլխաւոր շտաբին. «Մանջուրական զօրքի շրջանում յուլիսի 30-ին ամեն ինչ հանգիստ է։ Խունխուզների ուսումնական խմբերը երևան են հանում իրանց գործունէութիւնը Անտաց-Վանսիխու շրջանում, ուր այս օրերս նրանց յարձակումը մեր ուտեստ փոխադրող նաւի վրա աջողութեամբ յետ մղվեց փոխադրիչի պաշտպանութեան տակ։

ՏՈԿԻՕ։ (Վոլֆի գործ.)։ Ցղինդաօից պաշտօնապէս հաղորդում են, որ ռուսական «Նովիկ» և «Ասկոլդ» կրէյսէրները, Ցղինդաօում ածուխ վերցնելով, երթևեկում են նաւահանգստից դուրս։ Էլի երկու ռուսական ականանաւ հէնց նոր մտան նաւահանգիստը։ «Ցէսարեվիչ» զրահակիրը գտնվում է նաւահանգիստում։

ԼՕՆԴՕՆ։ «Լլոյդին» հաղորդում են Գիբրալտարից, որ անգլիական «Ռանդա» շոգենաւը, որը Գուլլից գնում էր Նէապոլ, ծանուցանում է, որ յուլիսի 30-ին մօտեցաւ ռուսական կրէյսերը, ստուգեց թղթերը և քննութեան ենթարկեց նաւը, իսկ յետոյ գնաց արագութեամբ։

ՍՏՕԿՀՕԼՄ։ «Տօրս» զրահակիրը ծանծաղուտի մէջ խրվեց ոչ-հեռու Ստոկհոլմից։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Յուլիսի 31-ին Աստրախան ժամանեց բժշկական գլխաւոր տեսուչ Անրեպ խօլերայի դէմ կուող յանձնաժողովի հետ քննելու համար բոլոր մինչև այժմ ձեռք առած միջոցները, եթէ խօլերան մտնելու լինի նահանգի սահմանները։

ՎԻԼՆԱ։ Թագաժառանգ Ցէսարեվիչի ծննդեան առիթով գեներալ-նահանգապետը կարգադրութիւն արեց երկրի մէջ՝ պարտադիր կանոնների հիման վրա կալանաւորութեան ենթարկված բոլոր անձանց ազատելու մասին։

ՏՈԿԻՕ։ (Ռէյտէր)։ «Ծովապետ Տոգօ հեռագրով հաղորդեց, որ յուլիսի 28-ի կռուի մէջ ռուսական հինգ զրահակիրներ ըստ երևոյթին սաստիկ վնասվեցին. «Պօբէդա» զրահակրի վրա պոկված են երկու կայմեր և ջարդված է մի մեծ թնդանօթ. «Ռէտվիզանին» մի քանի անգամ դիպչում էին ռումբեր և նա կարծես բաւական լուրջ վնասվածք է ստացել։ Ռուսական կրէյսէրները համեմատաբար բիչ վնասվեցին, նրանցից վնասվել են հինգը։ Եապոնական նաւերին պատճառած վնասները ժամանակաւորապէս ուղղված են։

ՉԻՖՈՒ։ (Ռէյտէր)։ Ռուսների կորուստները «Ռէշիտէլնի» ականանաւի վրա տեղի ունեցած կռուի ժամանակ անհայտ են. ջուրը նետված նաւաստիները կապած ունէին փրկարար գօտիներ։ Կապիտանը և մի քանի վիրաւոր նաւաստիներ գտնվում են հիւանդանոցում։ Ռուսական մի նաւաստի, նախ քան նրան հրացանազարկ անելը, նաւից ծովը թափեց մի քանի եապոնացիներ։ Ռուսները հաւատացնում են, որ եապոնացիները ընդհարման հէնց սկզբում կրակ բացին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ (Ռէյտէր)։ Զիֆուում տեղի ունեցած դէպքը սաստիկ մտատանջութեան մէջ դցեց հասարակական կարծիքը, պաշտօնատար անձանց և պետական դէպարտամենտին։ «Ռէշիտէլնիի» վրա յարձակումը Զինաստանի չէզոքութեան խախտումն է։ Այստեղ երկիւղ են կրում, որ համաձայնութեան խախտումը, որի հիման վրա պատերազմական

գործողութիւնների շրջանը սահմանափակվում է Մանջուրիայով և Կորէայով, պատերազմի մէջ կը խառնի Չինաստանին, որպէս Եապոնիայի դաշնակցին։ Միացեալ-Նահանգները ուրիշ պետութիւնների հետ միասին ամէն ջանք գործ կը դնեն այդ բանը կարգադրելու համար, պահպանելով համաձայնութիւնը իր ամբողջ ոյժի մէջ։

ՊԱՐԻԶ։ Լուբէն հեռագրեց Թագաւոր Կայսրին, ջերմագին շնորհաւորելով Թագաժառանգ Ցեսարեվիչի ծննդեան առիթով, և բարեմաղթելով Թագուհի Կայսրուհի առողջութեան վերականգնումը և բաղդաւորութիւն ցանկալով Թագաժառանգին և ամբողջ Կայսերական Տանը։

ՉԻՖՈՒ։ Կրէյսէր «Պալլադա» չէ եկել։ «Ցեսարեվիչ» և երեք հակառականաւեր մեռեալ են Ցզինդաոում։ «Նովիկ» իբր թէ գնաց Ցզինդաոից 24 ժամ անցնելուց յետոյ։ «Ցեսարէվիչը» լուրջ կերպով վնասված է. նրան կարկատում են։ Հաւատացնում են, որ գերմանացիները օգնում են աշխատանքների մէջ։ Եապոնական մի զօրեղ նաւախումբ գնաց դէպի հարաւ Վլադիվոստոկեան էսկադրան բռնելու նպատակով, որը դեռ չէ կարողացել միանալ Արգէնտինայից եկող կրէյսէրների հետ։

1 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Ալէքսէեվի հեռագիրը յուլիսի 30-ից. «Յուլիսի 30-ից Չիֆուի հիւպատոսի զեկուցման համեմատ, նախընթաց գիշերը երկու եապոնական ականանաւեր մտան նաւահանգստի ներսը առաւօտեան մօտ երեք ժամին և զինաւորված յարձակում գործեցին «Ռէշիտէլնի» ականանաւի վրա, որը նախընթաց օրը, հրամանատարը համաձայնութիւն կայացնելով չինական իշխանութիւնների հետ, զինաթափ էր արված, որի մասին եապոնացիներին յայտնի էր։ Ականանաւը պայթեցվեց հրամանատարի հրամանով, բայց ջրասոյզ չեղաւ և եապոնացիները դուրս բերեցին նաւահանգստից։ Հրամանատար լէյտենանտ Բօշչակովսկի, օֆիցէրներ Կանէվսկի, Սէրգէյ Պետրով և Կիսլեակով ու նաւաստիներից մեծ մասը ազատվեցին լող տալով։ Նրանց ասելով, եապոնացիները հրացաններ էին պարպում մեր ազատվողների վրա»։

Կօնտր-ծովապետ Մատուսեվիչի հեռագիրը Նորին Մեծութեան՝ յուլիսի 30-ից. «Ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Մեծութեան, որ յուլիսի 28-ի լուսաբացին մեր էսկադրան ոկսեց դուրս գալ ծովը և նաւահանգիստը թողեց՝ ունենալով 6 զրահակիր, «Ասկոլդ», «Դիանա», «Պալլադա», և «Նովիկ» կրէյսէրները և 8 ականակիր։ Եապոնացիները մեր դէմ կենտրոնացրին առաջին նաւախումբը —«Ասախի», «Միկազա», «Ֆուջի», «Եաշիմա» և «Շիկիշիմա» զրահակիրները, «Նիսսին» և «Կասուգա» կրէյսէրները, երկրորդ նաւախումբը—«Եակումա», «Կասագի», «Զիտոզա» և «Տակասագո» և երրորդ նաւախումբը—«Ակիցուշիմա», «Իձումի», «Մատցիշիմա», «Իացուկիշիմա» և «Խաշիտաղէ» կրէյսէրները, «Զին-Իէն» զրահակիրը և երեսունի չափ ականակիրներ։ Մեր էսկադրան մանեվրներ էր անում, որպէս զի կարէ անցնէ թշնամու նաւերի դիծը։ Այդ ժամանակ եապոնական ականակիրները մեր էսկադրայի ճանապարհին լողացող ականներ նետեցին, որոնք շատ դժուարացրին մեր մանեվրները։ Ցերեկվայ ժամը 1-ին, 40 բոպէ տևող մի ճակատամարտից յետոյ, էսկադրան կարողացաւ ճանապարհ գտնել և դիմել դէպի Շանտունգ։ Թշնամին կամաց-կամաց հանում էր մեր ետևից։ Ժամը 5-ին կրկին ճակատամարտ սկսվեց, որ շարունակվեց մի քանի ժամ աջողութեամբ։ Կուի ժամանակ սպանվեց էսկադրայի հրամանատարը և վիրաւորվել է ու գիտակցութիւնը կորցրել «Ցեսարեվիչ» զրահակրի հրամանատարը։ Համարեա միաժամանակ վնասվեցին «Ցեսարեվիչ» զրահակրի ղեկը և մեքենան։ 40 բոպէ յետոյ նա կանգնեց, որի պատճառով և միւս նաւերը ստիպված էին շարժումներ անել նրա շուրջը։ Էսկադրայի հրամանատարութիւնն անցաւ իշխան Ուխտոմսկուն, իսկ «Ցեսարեվիչ» զրահակրի հրամանատարութիւնն անցաւ աւագ օֆիցէրին։ Մութն ընկնելով, «Ցեսարեվիչը», էսկադրային հետևելու վիճակի մէջ չը լինելով և կորցնելով նրան իր աչքից, ծովեց, որ փորձէ Վլադիվոստոկ գնալ։ Գիշերը նա ենթարկվեց ականային յարձակումների։ Լուսաբացին՝ Շանտունգի մօտ, նայելով զրահակրի վնասվածքները և որոշելով նրանց չափը, հրամանատարը վճռեց, որ զրահակիրը մինչև Վլադիվոստոկ չէ կարող հասնել և վճռեց գնալ Կիաո-Զաո կարկատան անելու համար։ Կուի ժամանակ սպանված են ծովապետ Վիտգէֆտը, ծովապետի նաւի շտուրման Ազարիեվը, ֆլագ-օֆիցէր Էլլիսը և շտուրման Դրագիչեվիչը։ Թեթև վիրաւորված են՝—ես, Կետլինսկին, աւագ ֆլագ-օֆիցէր Կեդրովը, ֆլագ-օֆիցէր Կուշնիննիկովը, զրահակիրի հրամանատար Իվանովը, Շուլովը, Նենիւկովը, Պիլկինը և Լէօնտիեվը։ Սպանված և վիրաւորված զինուորների թիւը դեռ լիապէս պարզված չէ։ Երեկոյեան ժամը 9-ին հասայ Կիաո-Զաո և այնտեղ գտայ «Նովիկ» կրէյսէրը և «Բեզուժնի» ականակիրը։ Երջանիկ եմ վկայելու Ձերդ Մեծութեան օֆիցէրների և զինուորների անձնուրաց քաջութիւնը»։

ԽԱՐԲԻՆ։ (Սեպ. թղթ.)։ Վլադիվոստոկի էսկադրայի երեքօրեայ թափառումը Եապոնիայի արևելեան ափերի մօտերը ծովափի ազգաբնակութեան մէջ ահագին սարսափ առաջացրեց և կանգնեցրեց նաւերի շարժումները, որոնք թագնվեցին նաւահանգիստների պաշտպանութեան տակ։ Օտարները որոշել են Եապոնիա բեռներ տանել՝ քրէէը կանխապէս ոսկով ստանալով։—«Նայդ-Կօմմանդերի» ձերբակալված ծառայողները պատմում են, թէ իրանք սպասում էին, որ կը հանդիպեն ում ասէք, միայն ոչ ռուսներին։ Ազգաբնակութիւնը հանդիստ է։

ՇԱՆԴԷԱՅ։ «Ասկոլդ» կրէյսէրը ժամանեց Վուզուն։ Նաւը ջնասված է ջրագծից վերև և 5-դ խողովակը քանդված է։ Հակառականակիր «Գրոզովոյը» գետը մտաւ, մեքենան կարկատելու անհրաժեշտութեան պատճառով։ Օֆիցէրները յայտնում են, որ ռուս նաւերը, կատաղի կուից յետոյ, կարողացան պատռել եապոնական գիծը և հեռանալ զանազան ուղղութիւններով։ Յուլիսի 31-ին եկան «Ասկոլդը» և «Գրոզովոյը»։ «Ասկոլդը» իրաւունք է պահանջում նաւահանգստում մնալու, որովհետև չէ կարող ծովում մնալ։

ՏՕԿԻՕ։ (Վօֆլ)։ Պաշտօնական։ Տօգօն զեկուցանում է, որ ռուսական էսկադրան, յուլիսի 28-ին Պօրտ-Արտուրից դուրս գալով, դիմեց դէպի հարաւ։ Մեր միացեալ նաւատորմը յարձակվեց ռուսաց նաւերի վրա Պօրտ-Արտուրից 25 ծովային մղոն հարաւ-արևելք և հալածեց արևելեան ուղղութեամբ։ Ծագեց մի կատաղի կռիւ ցերեկվայ ժամը 1-ից մինչև արևամուտը։ Աւելի ուշ՝ թշնամու կրակն զգալի կերպով թուլացաւ։ Նրա ռազմական կազմը բոլորովին անկարգ դրութեան հասաւ։ «Ասկոլդը», «Նովիկը», «Ցեսարեվիչը», «Պալլադան» և մի քանի հակառականակիրներ փախան դէպի հարաւ և ազատվեցին։ Մնացած նաւերը յետ գնացին, հաւանօրէն Պօրտ-Արտուր, մեր ականակիրների և հակառականակիրների գիշերային յարձակումից յետոյ։ Մեր նաւատորմը ոչ մի լուրջ ջնաս չը ստացաւ։ Մարդկանց ընդհանուր կորուստը հաշվվում է 170 հոգի։

—Միկադօն հրամանագրել է մարաջախտ Օյամային թոյլատրել կանանց, հոգևորականներին, առևտրականներին և չէզոք պետութիւնների դիպլոմատիական ներկայացուցիչներին հեռանալու Պօրտ-Արտուրից և ցոյց տալ նրանց պաշտպանութիւն։ Բացի վերոյիշեալներից, Օյաման թոյլատրեց է ստացել հեռացնելու խաղաղ բնակիչներին այն պայմանով, որ նրանք այլ ևս մասնակցութիւն չունենան պատերազմական գործողութիւններում։

ՑԷՏԻՆԻԷ։ (Կօրր. Բիւրօ)։ Թագաժառանգ Ցեսարեվիչի ծննդեան առիթով մենաստանում մաղթանք կատարվեց, որին ներկայ էին Ձերնօգօրիայի իշխան Նիկոլայը, իշխանազն Դանիլօն, իշխանուհիները՝ Միլենան և Միլիցան, ռուսական գործերի հաւատարմատարը, մինիստրները, բարձրաստիճան պաշտօնեաները և ժողովրդի մեծ բազմութիւն։ Թնդանօթի 21 հարուած տրվեց։ Ամբողջ քաղաքում նուագում է մուզիկան։ Մաղթանքից յետոյ կայացաւ ռուսական ներկայացուցչին շնորհաւորութիւններ անելու հանդէսը, որ տեղի ունեցաւ ռուս գործակալութեան տան առաջ բուռն ծափահարութիւններով։

ԲԵՐԼԻՆ։ Վիլհէլմ կայսրը նոյեմբերի սկզբներին կուղևորվի Անգլիա, ուր կիջնանէ Վինզզօրեան պալատում։ Նա կը մասնակցէ պալատական որսերին։ Կայսրը 3 օր անց է կացնելու լորդ Լօնսդալի կալուածում։

ՊԱՐԻԶ։ Մօն-Մարտրի գերեզմանատունը տեղի ունեցաւ Վալդէկ-Ռուսսօի թաղումը։

ՄՕՍԿՎԱ։ Մոսկվան յաւերժացնում է Թագաժառանգ Ցեսարեվիչի ծննդեան օրը, հիմնելով արհեստագիտական մի դպրոց երեք հարիւր տղաների համար։

Լէյտենանտ Բօշչակովսկու հեռագիրը յուլիսի 31-ից. «Ամենահպատակօրէն զեկուցանում եմ, որ յուլիսի 29-ին ինձ յանձնված «Ռէշիտէլնի» ականանաւով Պօրտ-Արտուրից եկայ Չիֆու նշանաւոր հեռագիրներով, թշնամու պաշարման երկու գիծը կտրելով և ծովապետ Գրիգորովիչի հրամանագրութեան համաձայն, զինաթափ եղայ և իջեցրի զինուորական դրօշակը։ Բոլոր ձեռնարկութիւնները կատարված էին։ Յուլիսի լոյս 30-ի գիշերը, գտնվելով նաւահանգստի ներսում, ենթարկվեցի եապոնացիների աւազակային յարձակմանը, որոնք մօտեցան երկու էսկադրային ականանաւով և մէկ կրէյսէրով և ուղարկեցին դէսանտ օֆիցէրի հետ, որպէս թէ բանակցութիւնների համար։ Զէնք չունենալով դիմադրութեան համար, ես հրամայեցի պատրաստել «Ռէշիտէլնի» ականանաւը պայթեցնելու համար։ Երբ եապոնացիները սկսեցին բարձրացնել իրանց դրօշակը, ես վիրաւորանք հասցրի եապոնական օֆիցէրին՝ ապտակելով նրան և, ջուրը գցելով նրան, հրամայեցի նաւաստիներին դուրս քշել թշնամուն, սակայն մեր դիմադրութիւնը իրական չէր կարող լինել, և եապոնացիները տիրեցին ականանաւին։ Նաւի քթի կողմը փամփուշտի ներքնատան մէջ և մեքենաների բաժանմունքում տեղի ունեցան պայթիւններ, սակայն «Ռէշիտէլնի» ականանաւը ջրասոյզ չեղաւ, բայց քթով սաստիկ խրվելու պատճառով եապոնացիները դուրս բերեցին նաւահանգստից։ Ցոյս ունեմ, որ նրանք չեն հասցնի նրան մինչև իրանց նաւահանգիստը։ Կօմանդան և օֆիցէրները ազատված են, բացի ականահատ Վալօվիչից և հնոցպան Զվիրբուլիսից։ Վիրաւորված են չորսը անվտանգ։ Միչման Պետրով, դիմադրելով եապոնական դրօշակի բարձրացման, հրացանի կոթով ծանր հարուած ստացաւ կրծքում, որը ներքին արիւնհոսութիւն առաջացրեց. ես վիրաւորված եմ աջ ազդրում. գնդակը դեռ ևս չէ հանված. պարոններ օֆիցէրների և ծառայողների ընթացքը բարձր է որ և է գովասանքից։ Ֆրանսիական փոխ-հիւպատոսը ամենայն հովանաւորութիւն և հատակրութիւն ցոյց տուեց»։

Գեներալ-ադիւտանտ Ալէքսէեվի հեռագիրը Նորին Մեծութեան յուլիսի 31-ից. «Ի լրումն իմ հեռագրի յուլիսի 30-ից, Չիֆուի հիւպատոսի զեկուցումների համաձայն, ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը, որ մինչև հիւպատոսը բանակցութիւններ էր վարում տաօտաի հետ «Ռէշիտէլնի» ականանաւի Չիֆուում ժամանակաւորապէս մնալու մասին մեքենան կարկատելու համար, ականանաւի հրամանատարը, կօնտր-ծովապետ Գրիգորովիչի տուած հրահանգի հիման վրա, մեքենայի փչանալու պատճառով, համաձայնութիւն կայացրեց չինական ծովապետի հետ ականանաւը զինաթափ անելու մասին և յանձնեց նրան թնդանօթների կողպէքները, հրացաններ և ականների զարկիկներ, իջեցնելով դրօշակը և վիմպէլը։ Եապոնացիների յարձակումից յետոյ լէյտենանտ Բօշչակովսկի, միչման Պետրով, մեքենագէտ Կիսլեակով և 21 հոգի կօմանդայից ազատվեցին չինական կրէյսէրի նաւակով, իսկ լէյտենանտ Կանէվսկի և 22 հոգի կօմանդայից—լողացող փարոսի մարդկանց ձեռքով և առևտրական նաւերի մակոյկներով։ Կօմանդայի 47 մարդուց պակասում են չորս հոգի։ Հրամանատարը վիրաւորված է գնդակով ազդրում։ Վէրքը ծանր է, բայց անվտանգ է համարվում. նա հիւանդ միչման Պետրովի հետ զետեղված է ֆրանսիական միսիոնէրական հիւանդանոցում, ուր արդէն բերվեց ծառայողներից մէկը, թեթև վիրաւորված»։

Թագաւոր Կայսրի Բարձրագոյն հրամանով, յուլիսի 30-ին արտաքին գործերի մինիստրը յանձնարարեց Պարիզի ռուսական դեսպանին դիմել ֆրանսիական կառավարութեանը խընդրելով յայտնել հանրապետութեան Տօկիօի ներկայացուցչի միջոցով կայսերական կառավարութեան անունից ամենաեռանդուն բողոք այն բանի առիթով, որ եապոնացիները սարսափելի կերպով խախտեցին թէ Չինաստանի չէզոքութիւնը և թէ միջազգային իրաւունքի սկզբունքները, յարձակում գործելով, և այն լուրջ հետևանքների մասին, որ կարող են ունենալ նրանց թոյլատրված չէզոքութեան խախտումն։

ՄՈՍԿՈՒԷՆ։ (Սեպ. թղթ.)։ Լուրերին նայելով, եապոնական զօրքերը յետ են քաշվել Անշանժանից դէպի հարաւ։ Այդ հանգամանքը գտնվում է եապոնական զօրքերի մի մասը Պօրտ-Արտուր ուղարկելու լուրի հետ յարաբերութեան մէջ։ Երէկ Անշանժանում լսվում էին թնդանօթի ձայներ հարաւային կողմերից։ Ասում են, որ մեր մի զօրախումբը, որ առաջ էր շարժվել դէպի Սիմուչէն, ունեցել է մի աջողակ գործ և յետ է քշել եապոնացիներին։

ՄՈՍԿՈՒԷՆ։ Լուրերին նայելով՝ Պօրտ-Արտուրը պաշարող եապոնական բանակը ստացել է նոր օժանդակ զօրքեր։ Եապոնացիները դասաւորվել են երկու խմբերով. մէկը լեռներում՝ Լունվանտանի և Տախէ ծովախորշի միջև և միւսը՝ լեռների վրա, Լուիզա և Տասը-Նաւ ծովախորշերի միջև։ Մնացած թնդանօթները դրված են Գայլի լեռներից արևելք եղած բարձունքների վրա։

ՏՕԿԻՕ։ (Ռէյտէր)։ Պաշտօնական։ Յուլիսի 29-ին Չիֆուից ստացված հեռագրի համաձայն, ռուսական երկու ականանաւ ափ են դուրս նետված Վէյ-Հայ-Վէյից 20 մղոն արևելք։ «Տակաչիհո» կրէյսէրն անթել հեռագրով հաղորդեց ծովապետութեանը Տակիշիկիից, որ այսօր առաւօտեան ժամը 5-ին սկսվեց ճակատամարտ Ցուսիմի մօտերը եապոնացիների և վլադիվոստոկեան էսկադրայի միջև։

ՉԻՖՈՒ։ (Ռէյտէր)։ Հաղորդում են, որ Վէյ-Հայ-Վէյ է հասել մի մեծ մակոյկ 60 ռուս նաւաստիներով։ Ենթադրում են, որ նրանք պատկանում են Վէյ-Հայ-Վէյի մօտ ծանծաղուտում թաղված երկու հակառականաւերի կօմանդաներին։

ՎԷՅ-ՀԱՅ-ՎԷՅ։ (Ռէյտէր)։ «Բուրնի» ականանաւը թաղվեց ծանծաղուտում Շանդունի հրուանդանից հարաւ և պայթեցվեց։ 3 օֆիցէր և 60 նաւաստի ոտով եկան այստեղ երեկոյեան և, հաւանօրէն, կուղարկվեն Հանգկանգ բրիտանական զինուորական նաւով։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ (Ռէյտէր)։ Պետական դեպարտամէնտում ասում են, որ դեպարտամէնտը չէ կարող հրաւիրվել ստիպելու Չինաստանին, եապոնիային կամ Ռուսաստանին ճշտութեամբ գործադրել պատերազմական գործողութիւնների շրջանին վերաբերեալ պետութիւնների միջև կատարած որոշումները և համաձայնութիւնները։ Միացեալ-Նահանգները կարող են միայն բարոյական ներգործութիւն անել համաձայնութիւն պահպանելու համար։—Պետական քարտուղար Գէյը յայտնեց, որ ամերիկաթիւրքական միջնադէպքում Բ. Դուռը համաձայնվեց ամերիկական Միացեալ Նահանգների բոլոր պահանջներին։ Միջնադէպքը վերջացած է։

1 օգոստոսի

ՄՈՍԿՈՒԷՆ։ Լուր է պտտում, որ թշնամու, երևի Կուրօկիի նշանաւոր ոյժեր ներկայումս շարժում են կատարում հարաւ-արևելքից դէպի հիւսիս-արևմուտք։ Ամեն բանից երևում է, որ մերձակայ ապագայում կորեական դէպքեր են տեղի ունենալու։

ԼՕՆԴՕՆ։ Հնդկաստանի բիւդժէտը քննելու ժամանակ Հնդկաստանի գործերի պետական քարտուղար Բրոդրիկ յայտնեց համայնքների ժողովում, որ գեներալ Կիտչենէր մշակեց հնդկական զօրքերը զէնքի կանչելու սիստեմը վերակազմելու յատակագիծը։ Յատակագիծը յանձնված է հնդկական կառավարութեան քննութեանը։ Տիբէտական միսսիայի վերաբերմամբ Բրոդրիկ ասեց. «Մենք ներս մտանք Լխասսա, անկեղծ դիտաւորութիւն ունենալով թողնել քաղաքը, հէնց որ համաձայնութիւնը կայացած կը լինի։ Արշաւախումբը չի մնայ Լխասսա աւելի երկար այն ժամանակամիջոցից, որի ընթացքում զինուորական խորհրդաժողովներով զօրքերի յետ կանչելը վտանգաւոր կը լինէր։ Կառավարութիւնը մտադրութիւն չունի պրոտէկտորատ հիմնել Լխասսայում կամ ըէզիդէնտ նշանակել այնտեղ, բայց հաստատ վճռել է ստիպելու յարգել բրիտանական անունը։ Ռուսաց կառավարութեանը մենք լիովին բացատրեցինք դրութիւնը և գոհացուցիչ հաւաստիացումներ ստացանք։ Այդ հաւաստիացումների հիման վրա կարելի է յուսալ, որ կը կապվի դաշնագիր տիբէտցիների հետ, որը վերջ կը դնէ թշնամական գործողութիւններին։ «Աֆգանիստանի վերաբերմամբ Բրոդրիկ յայտնեց, որ այժմեան թագաւորող Էմիրը ոչ մի նոր համաձայնութիւն չէ կայացրել սուբսիդիայի վերաբերմամբ։

ԲԷԼԳՐԱԴ։ Սերբական թագաւորը հեռագիր ուղարկեց Պետերհոֆ, արտայայտելով Թագաւոր Կայսրին և Թագուհի Կայսրուհուն իր անունից, նոյնպէս և ռուսաց թագաւորին շնորհակալ սերբական ժողովրդից ամենանուկեղծ բարեմաղթութիւններ, որոնք կուղեկցեն ռուսական Գահի նորածին թագաժառանգին, սլավոնականութեան յոյսին։

Կ. ՊՕԼԻՍ։ (Կօր. Բիւրօ)։ Սուլթանը հեռագրով շնորհաւորեց Թագաւոր Կայսրին Թագաժառանգի ծնունդը։

ՉԻՖՈՒ։ (Ռէյտէր)։ Ցզինդաօից ստացված հեռագրի համաձայն «Ցէսարևվիչ» խարիսխ գցելով կանգ առեց ափի մօտ։ Եապօնացիների պահանջին, որ ռուսական նաւերը դուրս գան պատերազմելու, նրանց պատասխան տրվեց, որ այդ նաւերը զինաթափ կը լինեն։ «Բէզ-ուշնի» և «Բէզպօշչադնի» ականանաւերը թեթև վնասուածքներ ստացան։ «Բէզստրաշնի» ականանաւը ամենևին ոչինչ վնասուածք չը ստացաւ։—գերմանական «Տէտիս» կրէյսերը Չիֆուից գնաց Ցինդաօ։ Լուր է պատում, որ Տօգօի էսկադրան գնում է Շանգհայ։

ՆԻԺՆԵՏԱԴԻԼՍԿ։ Կարմի խաչի տեղական կոմիտէտը բաց է արել 41 մահճակալով մի հիւանդանոց վիրաւոր պատերազմողների համար և օրհնված է 21 լրացուցիչ մահճակալների համար շինվելիք տեղը։

ՄՕՍԿՎԱ։ Այսօր Մոսկվա ժամանեց կայսերական լրաբեր գեներալ-ադիւտանտ Իշխան Դոլգօրուկին։ Կէսօրին Ռուպենսկի տաճարում՝ Իշխանութիւնների և դասակարգերի ներկայացուցիչների ներկայութեամբ գոնաբանական ժաղթանք կատարվեց և աւագ-սարկաւագը կարդաց մանիֆէստը։ Ժամը 1-ին քաղաքային դումայում կայացաւ արտակարգ նիստ։ Լսելով քաղաքագլխի կարդացած մանիֆէստը, դուման որոշեց առ ոտս Նոցա Մեծութիւնների դնել իրանց ամենահպատակ զգացմունքները, հիմնել մի արհեստագիտական դպրոց 300 տղաների համար, անուանելով նրան «Թագաժառանգ Ալէքսէյի դպրոց», խնդրել թոյլատրութիւն Նոցա Մեծութիւններին նուիրելու Ս. Ալէքսէյի պատկերը և ներել 30,000 բուբլի հիւանդանոցի համար մնացած պարտքերը։ Դումայի յանձնարարութեամբ, քաղաքագլուխը նուիրեց իշխան Դոլգօրուկովին մի թանգագին թաս։ Վաճառականական ընկերութիւնը՝ Թագաժառանգի ծնունդը յաւերժացնելու համար, 100,000 ր. յատկացրեց վիրաւորներին տաք զգեստ մատակարարելու համար և մեշչանների դպրոցներում հիմնում է 50 թոշակ։

ԲՈՒԽԱՐԻՍ։ Յուլիսի 31-ին, Պետերբուրգ են ուղարկված 2 վագոն լիքը իրեր, որ նուիրել է թագաւորական զոյգը ռուսական կարմիր Խաչին։

2 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է Բարձրագոյն ուկազ. «Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ գեներալ-լեյտենանտ Գլազովին Աստծուողորմած հրամայում ենք լինել ժողովրդական լուսաւորութեան մինիստր։»

Թագաժառանգ Ցէսարևվիչ և Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլաևվիչ նշանակված է բոլոր կազակ զորքերի ատաման։

Բիւլբուլէն Նորին Մեծութիւն Կայսրուհու առողջական դրութեան մասին. «Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա գիշերը լաւ անցկացրեց։ Տաքութիւնը և զարկերակը տատանվում են նորմայի սահմաններում։ Թագաժառանգ Ցէսարևվիչը անցեալ օր ու գիշերը նոյնպէս շատ լաւ անցկացրեց։»

Ֆինլանդիայի գեներալ-նահանգապետ իշխան Օրլէնսկի նշանակված է գեներալ-ադիւտանտ Նորին Մեծութեան մօտ, թողնելով ֆինլանդական գեներալ-նահանգապետի պաշտօնում։

ԱԹԷՆՔ։ Սամօս կղզու վրա զգացվում էին ստորեկրեայ մի քանի զօրեղ հարուածներ։ Մի քանի տներ աւերված են։

ՄՈՒԿԴԷՆ։ (Սեփ. թղթակցից)։ Չինացիների տեղեկութիւնների համեմատ, սինմինտինեան շրջանում խունխուզների Ցիդզուշան, Տուլիսան և Ֆոլինոգօ պարագլուխները, զեկավարվելով եապօնացիներից, կազմակերպեցին նշանաւոր, մինչև 1000 մարդուց բաղկացած աւազակախմբեր։ Այդպիսի իւրաքանչիւր աւազակախմբի մէջ գտնվում են մօտ հարիւր եապօնացիներ լեռնային թնդանօթներով։ Աւազակախմբերը գնում են դէպի վերև Լեաօխէ գետով մեր երկաթուղիական գծի վրա յարձակվելու նպատակով։

ՏՕԿԻՕ։ (Ռէյտէր)։ Յուլիսի 29-ին առաւօտեան «Եօկայմարու» շոգենաւը նկատեց բաց ծովում Ժիգիվէյ կղզու մօտ, կօրէական ծովափի մօտ, ռուսական հակաականանաւը, որը գնում էր դէպի արևմուտք։ «Եօկայմարու» պատրաստվեց ափը ընկնել, բայց հակաականանաւը ձեռք չը տուեց նրան. նա ակներև աշխատում էր մտնել Պորտ-Արտուր, անջատվելով էսկադրայից յուլիսի 28-ի կուի ժամանակ։

ՇԱՆԳՀԱՅ։ (Ռէյտէր)։ «Ասկոլդը» կէսօրից յետոյ 3 ժամին եկաւ ծովակոտական դրօշակի տակ, կորցնելով երկու խողովակներ, ուժեղ ճեղքով ջրագծի մօտ և ուրիշ լուրջ վնասուածքներ ստանալով, նրա եռևի աշտարակը ոչնչացված է։ Նա սկսեց իր վնասված տեղերը կարկատել նաւաշինարանում։ Չինական նահանգապետը առաջարկեց «Ասկոլդին» և «Գրոզովոյին» հեռանալ 24 ժամում։ «Ասկոլդը», պատճառ բերելով թէ անկարելի է ծովում մնալ, յայտնեց, որ կը մնայ մինչև կարգադրութիւնների վերջանալը։—Տեղական նաւատնտեսութիւնը սարսափելի է։ Ապահովագրական ընկերութիւնները չեն ապահովագրում։ Այն կարծիքն է տիրապետում, որ Ռուսաստանը խախտում է Չինաստանի չեզոքութիւնը, ծառայեցնելով Շանգհայի նաւահանգիստը որպէս ապաստարան։

ՉԻՖՈՒ։ (Ռէյտէր)։ Չինական տեղեկութիւնների համեմատ, ծովային պատերազմի սկզբում 4 եապօնական նաւեր դիմադրում էին 6 ռուսական նաւերին։ Եապօնացիները սակայն շուտով օգնական զօրքեր ստացան, Ականի միջոցով «Ցէսարևվիչի» ղեկը ջարդվեց։ Ռումբերը ուրիշ վնասներ ևս հասցրին։ Աշուխը ռուսաց նաւերը ստացան երեք անգլիական շոգենաւերից։ Այդ շոգենաւերը դանվում էին արդէն մի քանի ժամանակ Ցզինդաօ։ Զորս ականանաւ, հաւանօրէն, եապօնական, մտան երեկոյեան Չիֆու նաւահանգիստը։ Մի կրէյսէր, որ նաւահանգստից դուրս էր թռցել և մի ականանաւ փոխանակեցին ազդանշաններ չինական ծովապետական նաւի հետ։

ՊԷԿԻՆ։ (Ռէյտէր)։ Լուր է պատում, որ բաց ծովում, Ցզինդաօի մօտ, տեղի ունեցաւ ծովային ճակատամարտ։—Ռուսաց և եապօնական միսսիաները և չինաց արտաքին գործերի մինիստրութիւնը շարունակում են ներծելտալ որ և է տեղեկութիւն։ Եապօնացիների Չիֆու ունեցած գործողութեան եղանակի մասին դիպլոմատները հրաժարվում են խօսակցութիւնից թղթակիցների հետ։ Մի դիպլոմատ հետևեալ ենթադրութիւնը յայտնեց. «Եապօնացիները գրաւել են ռուսաց ականանաւը Չիֆուի չեզոք նաւահանգստում, որպէս զի ստիպեն պետութիւններին յայտնել, արդեօք Ռուսաստանը իրաւունք ունի ուղարկել նաւեր չեզոք նաւահանգիստները ըստ իր հայեցողութեան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ՐՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Ժողովարան

Զորեքշաբթի, օգոստոսի 4-ին նշանակված է սանկական երեկոյթ երեկոյեան 6-ից մինչև 9-ը ժամը։ (Ե. Չ.) 1—2

ՐՈՇԿԱՊՏ

Յ. ԳԵՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր։
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Լելիամինսկայա փողոց № 8։ (Ե.ռ.) 8—100

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

հրաւիրում է Ուպրավայի և նրա ստորադրեալ հիմնարկութիւնների համար փայտի հայթայթումը յանձն առնել ցանկացող անձանց շնորհ բերել Ուպրավայի շինութիւնը 1904 թվի օգոստոսի 5-ին, առաւօտեան 11 ժամին, տեղի ունենալիք աճուրդին։ 2—3

Զգուշացէք կեղծուածներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՈՆ

Գ. Ֆ. ԻՒՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպէնները, սեւութիւնը, դեղին բծերը, պուպրիկները և պտուտները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապոն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թվի համար։

Կտորի գինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենամաւ դեղագործական մագազինեներում և դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Ֆ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ազմուրովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի կովկասեան ընկերութեան մէջ, Ծուլինովի և Գրիգորի, պ.պ. Պոպովների և Արիստակովի մօտ։ (1, 15) 14—24

Ամենաբարի հայ կանանց բարեգործական ընկերութեան մանկական պարտէզի համար ֆարկաւոր է մի հմուտ գիմնաստիկաւորտ վարժուհի. պայմանների մասին դիմել՝ Асхабадъ„, Г-жѣ Мамиконьянъ. (Հ. Ա.) 7—18

Գահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»։
Միայն Միխաիլ Լեբեդեվի
„этикетъ утвержденъ правъ.“ մակագրութիւնով։

Այս մի քանի օրում ոչնչացնում է ամենայն մոլեգնամոլ տարուբերումներ։

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
10, 20, 30 նոյ.—դ. 15 և 30 1—14

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ

լոյս տեսած աշխատասիրութիւնները.

1. «Խորտակված սէր» (վէպիկ) գինը . 30 կ.
2. «Գրքացի սորուկներ» (պատ.) (սակ.) 5 »
3. «Կեանքի բօսանից (վէպիկ) . . . 25 »
4. «Էմիլ Զօլա» (փոքրիկ տես.) (սակ.) 5 »
5. «Լօխմանի հէքիմը» (պատկեր) . . 8 »
6. «Բաֆֆի» (համ. տեսութիւն) (սակ.) 10 »
7. «Կեանքի խորշերից» (պատկերներ) 20 »
8. «Առաջին մուրացկանութիւնը» (պատ.) 8 »
9. «Արբեցողի զատիկը (պատկեր) . . 3 »
10. «Սօնայի նշանդրէքը» . . . . . 15 »

Գրքերի պահեստը—Թիֆլիս—«Գուտենբերգ» գրավաճառանոցում։ Հեղինակին դիմողները կունենան մեծ զիջում։ Առանց կարխավճարի չը դիմել։ Հասցէն Թիֆլիս, Հալաբար, Լազարեվսկայա, № 49, տուն Մուրադովի։ 1—2

Կենտրոնական Գրավաճառանոցում

Թիֆլիս, վաճառվում են հետևեալ գրքերը.

Ագիշանի Հ. կենսագրութիւնը, Վենետիկ—ս. Ղազար, 1902 թ. գ. 1 ր. 50 կ.
Անանեան Գ., Կորածներ, պիէս 5 գործ. Թիֆլիս, 1904 թ. գ. 40 կ.
Բարեան Գ., բժիշկ, Տնային բժշկարան, ա, պրակ, բնախօսութիւն և անդամազնութ. գ. 1 ր.
» » » Նոյնը, բ. պրակ, Թիֆլիս 1904 թ. գ. 1 ր. 60 կ.
Բալինջաղեանց Գէորգ, Նկարչի կեանքից յիշողութիւններ, Ս.-Պետերբուրգ 1903 թ. գ. 35 կ.
Գրիգորիանց Գր. տաղ քահ., Սոխակ Հայաստանի, Բագու, 1902 թ. գ. 1 ր.
Գէօթէի Ֆաուստ, ողբերգութիւն, Թիֆլիս 1904 թ. գ. 2 ր.
Գօրկիյ Մակսիմ, Իմ ուղեկիցը, Թիֆլիս, 1904 թ. գ. 10 կ.
» » Դանկոյի սիրտը, Թիֆլիս, 1904 թ. գ. 3 կ.
Շիլլէր, Բանաստեղծ-իդէալիստ, Ս.-Պետերբ., 1903 թ. գ. 3 ր. փառակազմ գ. 4 ր. ա.—բ. հ.
» » ր. հատորը առանձին 1 ր. 50 կ.

Վերոյիշեալ գրքերից միանուագ 10 ր. գնողները քաղաքում 10% զեղչ են ստանում, դաւառացիք ճանապարհածախս չեն վճարում, վճարը կանխիկ։ (Կ. 3—3

ԱՊԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
„ՍՏՈՒԿԵՆ ԵՒ ՔՆԿ.“
ԲԱԳՈՒ
Իր սեփական պահեստներում մշտապէս ունի

Երկաթ ամեն տեսակի և ձևի (Листовое, резервуарное, сортовое, фасонное, кровельное и оцинкованное) երկկողմի եկամէջ գերաններ, ջրհոն մեքենաներ «Գամերոն» և «Դուպլէքս», ռուսական գպային խողովակներ և գոտից գօրաւորող մասեր, ֆիտինգսներ և այլն։ Գուրգեռ գանազան տեսակի (станки токарные, сверлильные, строгальные и др.)։ Մամուլներ ծակող և ուրիշ տեսակներ։ Գոլգաս՝ գուրեր, կտրոցներ և գործիքներ շինելու համար։ Մեռագնայ փոքր, ազիս անշալ (согнеупорный), «Գիլենբոյդ» և կաւ, բևեռներ (заклепки котельныя, пистонныя)։ Դամեր գանազան տեսակի, պտուտակներ (болты) և գայլիներ, պղինձ թերթաւոր և կտրներով, պղնձէ խողովակներ, թուէտ ասֆալտած (асфалтированныя) խողովակներ ջրաղիների համար և դրանց զօրաւորող մասեր, Անագ ձօղաւոր, արճիճ թերթաւոր և կտրներով, գինկ թերթաւոր և այլն։ Պարագաներ (арматура) գլխեայ։ բռնկեայ և ձուլածոյ։ Գործիքներ գանազան տեսակի, բետոնէ առարկաներ, ցեմենտ. նմանապէս տեխնիքական ամեն տեսակի մնացորդներ և իրեր։

Ներկայացուցիչ է
ՐՈՒՍՏՈՆ ՊՐՈԿՏՈՐ և ԸՆԿ.
Շոգեմեքենաներ
Կերոսինեայ } շարժիչ մեքենաներ
Նաւթեայ }
Շոգեատներ (локомобилы)
Արգաւներ (катки для шоссе)
ՐԻՖԱՐԴ ՄԱՅԵՐ
Ներկեր գանազան տեսակի
Արճիճեայ ճերմկուց (бѣлила)
Արճիճեայ սուրբ (сурикъ)

ԳԵՐՄԱՆ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՆՆԵՍՄԱՆԵԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ
Միակ ներկայացուցիչը

Խողովակներ առանց կարի, գազեայ, նաւթահորերի, ծխնիլուկի և ջրաբաշխական։ Նմանապէս և ամրակուռ խողովակներ խտացուցիչների համար (компрессоръ)։

Կայմեր (мачты) անկար խողովակներից, ելեքտրական ուղիների լուսաւորութեան և այլ շինուածքների համա սիւներ հեռախօսական, հեռագրական լարերի և շանթարգելների համար։

Ներկայացուցիչ է նմանապէս «Գանտէյ» «Էմիլ Լիլ գարա և ընկ.» և ուրիշ ընկերութիւնների ու հաստատութիւնների։

Ընդունում է լիովին կատուցումն տախտակի, բուրդ լուանող և ուրիշ գործարանների. նմանապէս ընդունում է պատուէրներ այլ և այլ տեսակ տեխնիքական պիտոյքների վերաբերեալ։
Իւրաքանչիւր հարցերին պատասխանում է անմիջապէս։
Երաշխեալի ցուցակները ուղարկվում են ձրիաբար։ (Կ. 1 ան.)

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ
(INJECTION AU MATICO)

Գրիպ և ընկ. դեղագործների թոյլ է տրված Ռուսաստանում։ Այս հեղուկի մէջ շահագործված են պերուանեան Մատիկօ բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյը (սերմնաթափութիւն) և մի քանի տարվայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմնաթափութիւնները։
Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(2, 17) 9—19

ՊԱՀԵՍՏ
Լամպերի, պատառների և վերելի
Ե. Յ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ
Թիֆլիս, Դվորցովայա փող.
55000
Կտոր պատառներ գանազան գոյների և ոճի անցեալ 1903 թուականից մնացած վաճառվում է 30% մինչև 60% զիջումով ծախու գնից։
Օտարաքաղաքացիների պատուէրները շուտափոյթ կը կատարվեն ամենաճշդութեամբ, միայն խնդրվում է ուղարկել սենեակների ճիշդ չափը։
Հեռախօս № 238. (24 յ. 18 օ. 1, 22)

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го августа 1904 г. Գ. ԱՂԱՄԱԼԵԱՆ Типографія «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 15.